— Մենք բողոքում ենք մտրակի դէմ, եւ նոյնը մե՞նք պէտք է գործ դնենք, — ասաց նա:

Ես ոչինչ չպատասխանեցի:

Քանի որպէից յետոյ վերադարձաւ հաջին, բերելով իր հետ թէ ջուր եւ թէ մի օթոց.

— Օրհնած, — ասաց նա կիսածիծաղ եւ կիսավշտացած կերպով, — դէ ասա ջուր եմ ուզում, էլ ուր ես չարչարում ինձ: — Կարծես նոր էր հասկանում, որ ես ջուր էի ուզում:

— Էլ ուրիշ ի՞նչ էք հրամայում, — դարձաւ նա դէպի Ասլանը, — շուկայից գնելու ոչինչ չունէ՞ք:

— Դեռեւս ոչ, երբ հարկաւոր կը լինի մի բան պատոիրել, կը կանչենք ձեզ, — ասաց Ասլանը:

Հաջիի դէմքի վրայ երեւաց դժգոհութեան նման մի բան: Նա այն բարի սովորութիւնն ունէր, որ պատրաստ էր իր սենեակները բոլորովին ձրի տալ իր յաճախորդներին, միայն թէ ամէն ինչ նրա ձեռքով գնէին: Բայց, միեւնոյն ժամանակ, նա ունէր մի այլ սովորութիւն, որ ամենահասարակ ուտեստներ, որոնցմով լի էր բազարը, երբ պահանջէիր նրանից, նա միշտ դժոարութիւններ կյարուցաներ: Օրինակ, նրան ասում ես. «հաջի, կարո՞ղ ես մի փոքր հաց ու պանիր գնել բազարից»: Նա ուղղակի չի պատասխանի, թէ կարող եմ, այլ կասէ քեզ. «տեսնեմ, կարող եմ գտնել»: Նրա այդ անվճռականութիւնը այն նպատակն ունէր, որ ցոյց տայ, թէ մի անկարելի գործ է կատարում եւ յաճախորդին մեծ ծառայութիւն է անում:

Հաջին մի ցամաք մարդ էր, նիհար ծնօտները խնամքով ածիլած, եւ կոշտ մացառի նման ընչացքների ծայրերը կտրած, որոնք մի չար սովորութիւն ունէին միշտ բերանը մտնելու: Նրա դէմքի վրայ նշանաւոր էր երեւելի քիթը, որ կրում էր իր վրայ երկու բարձրութիւններ, որոնք, երկու գագաթների նման, միախառնոելով վերին շրթունքի հետ, կազմում էին մի երկար լեռնաշղթայ: Սխալ չէր լինի, եթէ ասէի, որ նրա երեսը բաղկացած էր ամբողջապէս քթից: Հաջիի կազմոածքի մէջ նշանաւոր էին եւ ոտքերը: Թէեւ բոլոր տաճկաստանցիք՝ ծալապատիկ նստելուց՝ ծուռ ոտքեր ունեն, բայց հաջիի ոտքերը այդ մասում մի առանձին բացառութիւն էին կազմում: Նրանք, դէպի կողքերի կողմը անկանոն կերպով դուրս ընկնելով եւ հետզհետէ թեքոելով, ձեւացնում էին երկու աղեղնաձեւ կիսաբոլորակներ, որոնց ծայրերը, ներքեւից եւ վերեւից միանալով, մէջտեղում թողնում էին մի ձոաձեւ տարածութիւն: Այդ էր պատճառը, որ նա կրիայի նման էր շարժւում: Թէ ի՞նչ գոյն, եւ